



2015թ-ի դեկտեմբերի 9-ին Ալավերդի համայնքում Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական դպրոցում կազմակերպվել էր Ալավերդի համայնքի 2016 թ-ի բյուջեի նախագծի հանրային բաց լսումները և քննարկում, որին մասնակցեցին Ալավերդու ԵԿԱ անդամները : Ալավերդու համայնքնապետ Կ.Փարեմուզյանը ներկայացրեց 2016թ-ի բյուջեի նախագիծը, քննարկման ընթացքում մասնակիցներն իրենց հետաքրքրող հարցերն ուղղեցին համայնքապետին : Ալավերդու ԵԿԱ անդամներն իրենց առաջարկությունները ներկայացրեցին

քննարկմանը, որոնք նախապես վերհանվել էին ֆոկլուս-խմբային քննարկման ժամանակ և դրանցից ըստ առաջնահերթության ընտրված առաջարկությունները ներկայացվեցին հանրային բաց լսումների և քննարկման ժամանակ , այն է՝ քաղաքապետարանի հետ համատեղ ստեղծել «Ռեսուրս կենտրոն», որում ներգրավված մարդիկ կզբաղվեն ֆոնդահայթայթման գործընթացով և համատեղ ուժերով ծրագրեր կիրականացնեն համայնքի համար, իսկ մյուսը վերաբերվում էր տրանսպորտային ծառայությունների որակի բարելավմանը : Ալավերդի համայնքում ավելացնել քաղաքի ներսում գործող համաքաղաքային տրանսպորտի աշխատաժամանակը, հանգստյան օրերին ժամը մեկ գործող տրանսպորտային ժամանակահատվածը դարձնել 30 րոպե մեկ և ներքաղաքային տրանսպորտացիայի համար մրցույթ հայտարարելու և հաղթողին ընտրելու ժամանակ ուշադրություն դարձնել , թե մրցույթում հաղթած ընկերությունն ինչպիսի ավտոպարկ ունի , ինչ տեխնիկական վիճակում է գտնվում նրանց ավտոբուսները և միկրոավտոբուսները և արդյոք կարող է պատշաճ որակով ծառայություն մատուցել ,քանի որ ներկայում օգտագործվող ավտոբուսները բավականին հին են, իսկ անձրևային օրերին ավտոբուսից օգտվելու դեպքում անձրևանոցի կարիք է զգացվում ավտոբուսների ներսում՝անձրևաջրերն անարգել թափանցում և կաթկթում են ուղևորների վրա: Ինչպես նշեց պրն. Կ Փարեմուզյանը ներհամայնքային տրանսպորտի ծառայությունների որակի բարելավման և պատշաճ ծառայություն մատուցելու համար ուղևորափոխադրումներ իրականացնող ընկերություն ինքն է շահագրգռված որակական և տեխնիկական բարելավումներ իրականացնելու համար, իսկ «Ռեսուրս կենտրոնի», շրջանակներում համագործակցության առաջարկությունն ընդունվեց քաղաքապետի կողմից և նախնական համաձայնություն ձեռք բերվեց համատեղ աշխատանքներ իրականացնելու 2016 թ-ի ընթացքում Ալավերդու ԵԿԱ –ի անդամները պատրաստա կամություն հայտնեցին համագործակցելու և իրենց գիտելիքներն ու ներուժը ներդնելու հետագա համագործակցության շրջանակներում ի նպաստ Ալավերդի համայնքի:

«Զարգացման Խաչներուկ » ծրագիրը իրականացվում է CCMS-ի («Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ) կողմից, ՀՀ Սպորտի և Երիտասարդության հարցերով նախարարության ֆինանսական աջակցությամբ:

